ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 132-Լ

ք. Երևան 30 հունիսի 2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 15-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթներով՝ Ինստիտուտի Գիտական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել

1) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի միջազգայնացման քաղաքականությունը՝ համաձայն N1 հավելվածի,

2) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական աշխատակիցների միջազգային շարժունության իրականացման ընթացակարգը՝ համաձայն N3 հավելվածի,

3) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ուսանողների միջազգային շարժունության իրականացման ընթացակարգը՝ համաձայն N3 հավելվածի,

4) «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի միջազգային շարժունության ընթացակարգերի ձևաթղթերը՝ համաձայն N4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 2-ից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԵԿՏՈՐԻ՝ ԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Միջազգայնացումը բարձրագույն կրթության մեջ այլևս ընտրություն չէ, այլ՝ անհրաժեշտություն: Դա այն ուղին է, որը տանում է դեպի որակ, արդիականություն և համաշխարհային ներգրավվածություն»

Ջեյն Նայթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ն 1
«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2025 թվականի հունիսի 30-ի Ն 132-Ա որոշման

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից բարձրագույն կրթության համակարգը զարգանում է գլոբալացվող աշխարհում, որտեղ համագործակցությունն ու գիտելիքի փոխանակումը դարձել են կրթության որակի, արդյունավետության և մրցունակության բարձրացման անբաժան մաս: Այս համատեքստում միջազգայնացումը վերածվել է ռազմավարական առաջնահերթության՝ իբրև խթան կրթության, գիտության և մշակույթի զարգացման համար:

Սպորտը և ֆիզիկական կուլտուրան հանդիսանում են ոչ միայն առողջ կենսակերպի և անձնային զարգացման կարևոր բաղադրիչներ, այլ նաև՝ միջմշակութային երկխոսության, խաղաղության և համերաշխության հզոր միջոց:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ), ունենալով տարիների փորձառություն սպորտի, ֆիզիկական դաստիարակության և առողջ կենսակերպի ոլորտներում, կարևորում է միջազգային համագործակցությունը՝ որպես որակյալ կրթության, առաջադեմ գիտական հետազոտությունների և ինստիտուցիոնալ կայունության հիմնասյուն: Սույն քաղաքականությունը կոչված է համակարգելու և ուղղորդելու Ինստիտուտի միջազգային գործունեությունը՝ կրթական, գիտական և սպորտային ոլորտներում՝ ստեղծելով ինստիտուցիոնալ միջավայր, որը խթանում է շարժունություն, ճանաչելիություն և փոխշահավետ գործընկերություն:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն քաղաքականությունը մշակվել է համաձայն՝

- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի
- ՀՖԿՍՊԻ-ի կանոնադրության
- ՀՖԿՍՊԻ-ի 2022-26թթ Ռազմավարական ծրագրի

- «Էրազմուս+ SIN-NEC» ծրագրի շրջանակներում մշակված բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման ինքնագնահատման վերլուծության:

1.1. Սույն քաղաքականությունը սահմանում է Ինստիտուտի միջազգայնացման ռազմավարական նպատակները, ուղղությունները, սկզբունքները և իրագործման գործիքակազմը:

1.2. Քաղաքականության միտված է նպաստել Ինստիտուտի միջազգային ճանաչելիության բարձրացմանը, միջազգային չափանիշներին համահունչ կրթության և գիտության որակի բարելավմանը, ուսանողների և աշխատակազմի ինտեգրմանը համաշխարհային ակադեմիական միջավայրին:

II. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Խթանել Ինստիտուտի միջազգային ակադեմիական և գիտական համագործակցությունը:
- Զարգացնել կրթական ծրագրերի միջազգայնացման գործընթացը, հատկապես՝ համատեղ անգլալեզու ծրագրերի ներդրման միջոցով:
- Ապահովել ուսանողների և աշխատակազմի շարժունության աճը:
- Աջակցել Ինստիտուտում իրականացվող գիտական աշխատանքների և հետազոտական ծրագրերի միջազգայնացմանը:
- Բարելավել Ինստիտուտի ինստիտուցիոնալ կարողությունները միջազգայնացման ոլորտում:
- Բարձրացնել Ինստիտուտի միջազգային ճանաչելիության մակարդակը:

III. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Միջազգային համագործակցություն և գործընկերություն

- Փոխըմբռնման հուշագրերի (MoU) կնքում արտերկրի բուհերի, կրթական և գիտական կառույցների հետ:
- Անդամակցություն միջազգային ակադեմիական ցանցերին:

3.2. Ուսումնական ծրագրերի միջազգայնացում

- Անգլալեզու կրթական ծրագրերի մշակում և ներդրում:
- Համատեղ/կրկնակի դիպլոմների հնարավորության գործարկում:
- Ամառային դպրոցների իրականացում:

3.3. Ուսանողության և աշխատակազմի շարժունություն

- Erasmus+ և այլ փոխանակման ծրագրերի ակտիվացում:
- Ֆինանսական, կազմակերպչական և խորհրդատվական աջակցություն շարժունության ծրագրերին:

3.4. Գիտական համագործակցություն

- Համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում:
- Միջազգային գիտաժողովների կազմակերպում:
- Միջազգային գիտաժողովներին մասնակցության ակտիվացում:

3.5. Միջազգային դիրքավորում և տեղեկատվություն

- Բազմալեզու տեղեկատվական համակարգի զարգացում:
- Միջազգային կրթական հարթակներին և ցուցահանդեսներին մասնակցութան ակտիվացում:

3.6. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

- Ինստիտուտի Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի գործառույթների ընդլայնում:
- Որակի ապահովման համակարգի համապատասխանեցում միջազգային (եվրոպական) ստանդարտներին:

IV. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4.1. Ինստիտուտը մշակում և հաստատում է տարեկան գործողությունների պլան՝ հիմք ընդունելով սույն քաղաքականության դրույթները:

4.2. Միջազգայնացման քաղաքականության իրականացումը գնահատվում է չափելի ցուցիչներով, ներառյալ՝

- Գործընկեր բուհերի և կազմակերպությունների քանակի ավելացում
- Միջազգային շարժունության մասնակիցների քանակի ավելացում
- Միջազգային հրապարակումների և գիտաժողովների ցուցանիշների աճ
- Միջազգային ծրագրերում ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացում:

4.3. Քաղաքականության իրականացումը, վերահսկումն ու գնահատումը ապահովում Ինստիտուտի արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորը՝ ՄՀԶԾ բաժնի ներգրավմամբ:

V. ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն քաղաքականությունը ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի հաստատման պահից:

5.2. Սույն քաղաքականության մեջ կատարվող փոփոխությունները և լրացումները ենթակա են հաստատման Գիտական խորհրդի կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
«ՀՖԿՊԻ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2025 թվականի հունիսի 30-ի N 132-Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարգը սահմանում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) պրոֆեսորադասախոսական (այսուհետ՝ ՊԴ) կազմի և վարչական աշխատակիցների միջազգային շարժունության գործընթացը՝ համահունչ Ինստիտուտի միջազգայնացման քաղաքականությանը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ինստիտուտի միջազգային համագործակցության զարգացման հիմնական նպատակը կրթության որակի բարելավումն է՝ ապահովելով ՊԴ կազմի և վարչական անձնակազմի մասնագիտական գործունեության միջավայրի փոփոխմամբ մասնագիտական գիտելիքների և փորձի հարստացումը:

1.2. Շարժունությունը նախատեսում է ուսումնական, հետազոտական կամ վարչական նպատակով միջազգային գործընկեր կազմակերպությունում կարճաժամկետ դասավանդելու կամ վերապատրաստվելու հնարավորություն

1.3. Շարժունությունը կարող է իրականացվել տարբեր միջազգային ծրագրերի միջոցով՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ Erasmus+, և երկկողմ համագործակցային պայմանագրեր:

II. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Շարժունության ծրագրերին դիմող դասախոսները և վարչական աշխատակիցները պետք է լինեն Ինստիտուտի հիմնական կամ պայմանագրային հիմունքով աշխատակից, գործընկեր բուհի հիմնական կամ պայմանագրային հիմունքով աշխատակից:

2.2. ՊԴ կազմի ներկայացուցիչները մասնակցում են շարժունությանը՝ համաձայն ամբիոնի և ֆակուլտետի նիստի հաստատման:

III. ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

3.1. Միջազգային շարժունության հնարավորությունները հրապարակվում են Ինստիտուտի Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի (այսուհետ՝ ՄՀԶԾ) բաժնի կողմից:

3.2.Դիմողը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում
- Ինքնակենսագրություն՝ Europass CV-ի ձևաչափով:
- Մոտիվացիոն նամակ
- Լեզվի իմացության մակարդակի հավաստագիր (B 2) մակարդակ

Օտար լեզվի իմացությունը հավաստող փաստատթղթի բացակայության դեպքում, լեզվի իմացությունը ստուգվում է հանձնաժողովի կողմից հարցազրույցի ժամանակ և անհրաժեշտության դեպքում տրվում է համապատասխան փաստաթուղթ ընդունող բուհ ներկայացնելու համար:

3.3. Դիմումների ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով՝ Արտաքին կապերի և ռազմավարական զարգացման գծով պրոռեկտորի, ՄՀԶԾ բաժնի, դեկանի և համապատասխան ամբիոնի վարիչի մասնակցությամբ:

IV. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԴԻՄՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Իրավունքներ՝

4.1.1.Իրավունք ունեն դիմելու՝ Ակադեմիական փոխանակման վերապատրաստման, դասավանդման, մասնագիտական փորձի կամ ուսումնասիրության նպատակով

4.1.2. Ինֆորմացիայի հասանելիություն՝ Տեղեկատվություն են ստանում ընթացիկ ծրագրերի մասին, ծանոթանում են պայմաններին, դիմելու կարգին և ժամկետներին:

4.1.3. Աջակցություն բուհի կողմից՝ Կազմակերպչական աջակցություն են ստանում փաստաթղթերի պատրաստման, վիզայի դիմելու գործընթացի, տրանսպորտի, կացության և ապահովագրության հարցերում:

4.1.4. Ճանաչում և գնահատում Շարժունության ընթացքում կատարած աշխատանքը (օրինակ՝ դասավանդում, վերապատրաստում) ճանաչվում և հաշվառվում է աշխատաժամանակի կամ կարիերայի զարգացման շրջանակում:

4.1.5. Ֆինանսական աջակցություն՝ Ստանում են աշխատավարձ՝ ծրագրով սահմանված չափով:

4.2. Պարտականություններ

4.2.1. Դիմելու կարգի պահպանում Պարտավոր են պահպանել հայտադիմումների կարգը, ներկայացնել ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն, ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը սահմանված ժամկետներում:

4.2.2. Պաշտոնական ներկայացուցչություն՝ Պարտավոր են ներկայացնել իրենց բուհը ըստ արժանվույն՝ ինչպես դասավանդման, այնպես էլ մասնագիտական գործունեության շրջանակներում:

4.2.3. Հաշվետվություն և արդյունքների փոխանցում՝ Շարժունությունից հետո պարտավոր են ներկայացնել հաշվետվություն (Mobility Report) ՄՀՀԾ բաժին համաձայն կից ձևաչափի, ինչպես նաև կիսվել ձեռք բերած գիտելիքով ու փորձով՝ սեմինարների, դասընթացների միջոցով:

4.2.4. Ծրագրի պայմանների պահպանում՝ Պարտավոր են հետևել շարժունության ծրագրի քաղաքականությանը, էթիկային և կարգապահական նորմերին, ինչպես նաև ընդունող բուհի կանոններին:

4.2.5. Իրականացնել ծրագիրը ըստ նպատակների՝

- Շարժունության իրականացում և արդյունքների ճանաչում
- Ընդունված մասնակիցը նախապատրաստում է անհատական աշխատանքային/ուսումնական ծրագիր
- Շարժունությունից հետո ներկայացնում է հաշվետվություն և մասնակցության հավաստագիրը:

V. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսավորումը կարող է ապահովվել շարժունության ծրագրի շրջանակում՝ օր. Erasmus+, կամ ըստ այլ համագործակցության պայմանագրով սահմանված դրույթների

VI. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Միջազգային շարժունության արդյունքների մոնիթորինգն ու տվյալների հավաքագրումը իրականացվում է ՄՀՀԾ բաժնի կողմից և տարեկան հաշվետվությունը ներկայացվում է գիտական խորհրդին Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորի կողմից:

VII. ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն ընթացակարգը հաստատվում է գիտական խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Այն կարող է վերանայվել ըստ Ինստիտուտի ռազմավարական առաջնահերթությունների:

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
«ՀՖԿՊԻ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2025 թվականի հունիսի 30-ի N 132-Է որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարգը սահմանում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) ուսանողների միջազգային շարժունության գործընթացը՝ համահունչ Ինստիտուտի միջազգայնացման քաղաքականությանը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ընթացակարգը կարգավորում է Ինստիտուտի ուսանողների միջազգային ակադեմիական և պրակտիկ շարժունության գործընթացը՝ ապահովելով թափանցիկություն և հավասար հնարավորություններ:

1.2. Շարժունությունը կարող է իրականացվել կիսամյակային ուսման, կարճաժամկետ փոխանակման, պրակտիկայի, ամառային դպրոցների կամ հետազոտական այցերի ձևաչափով:

1.3. Շարժունությունն իրականացվում է Ինստիտուտի կողմից հաստատված միջազգային համաձայնագրերի, ծրագրերի և դրամաշնորհների շրջանակում:

II. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Շարժունությանը կարող են մասնակցել Ինստիտուտի առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները:

2.2. Հիմնական պահանջներ՝

- Բարձր ակադեմիական առաջադիմություն (90 և բարձր ՄՈԳ),
- Լեզվի իմացության մակարդակ/ գիտելիքներ (B2/ հանձնաժողովի եզրակացություն),
- Հաստատված ուսանողական կարգավիճակ տվյալ կիսամյակում:

2.3. Նախապատվություն կարող են ստանալ՝

- Սոցիալապես անապահով ուսանողները,
- Ինստիտուտի հանրային և/կամ կամավորական ծրագրերին մասնակից ուսանողները:

II. ԴԻՄԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

3.1. Շարժունության մրցույթը հայտարարում է Ինստիտուտի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը՝ ծրագրի մեկնարկից առնվազն 3 ամիս առաջ:

3.2. Դիմումի փաթեթը պետք է ներառի՝

- Դիմում – հայտ,
- Մոտիվացիոն նամակ,
- Անձնագրի պատճեն,
- Ակադեմիական տեղեկանք (Transcript),
- Օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ,
- Ինքնակենսագրություն՝ Europass CV-ի ձևաչափով:

3.3. Դիմումները ընդունվում են էլեկտրոնային կամ տպագիր եղանակով՝ նշված վերջնաժամկետին համապատասխան:

IV. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Դիմումներն անցնում են՝

- Փաստաթղթային փաթեթի փորձաքննություն,
- Գնահատում՝ ընտրող հանձնաժողովի կողմից համաձայն ձևաչափի պահանջների:

4.2. Հանձնաժողովը ձևավորվում է Ինստիտուտի Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորի հանձնարարությամբ և նախագահությամբ՝ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

- համապատասխան ֆակուլտետի դեկան,
- համապատասխան ամբիոնի վարիչ,
- միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժնի ղեկավար,
- օտար լեզվի մասնագետ:

4.3. Ընտրության արդյունքները հրապարակվում են Ինստիտուտի պաշտոնական կայք էջում և սոցիալական հարթակներում:

V. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

5.1. Ընտրված ուսանողները՝

- Ստորագրում են եռակողմ պայմանագիր (Learning Agreement)՝ ուսանող, Ինստիտուտ, ընդունող հաստատություն
- Ստանում են տեղեկատվական ուղեցույց (pre-departure guide),

5.2.Անհրաժեշտության դեպքում ուսանողները մասնակցում են նախապատրաստական սեմինարների (մշակութային ադապտացիա, փաստաթղթային ձևակերպումներ, ապահովագրություն և այլն):

VI. ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Ուսանողը պարտավոր է տեղեկացնել Ինստիտուտին շարժունության ընթացքում տեղի ունեցող ցանկացած փոփոխության մասին:

6.2. Ուսանողի կարգավիճակը պահպանվում է շարժունության ընթացքում:

6.3. Ուսանողները շարժունության ընթացքում ստանում են կրթաթոշակ:

6.4.Ուսանողը կրում է պատասխանատվություն ակադեմիական պարտականությունները ընդունող հաստատությունում պատշաճ կերպով կատարելու համար:

VII. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

7.1 Ուսանողը պարտավոր է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը 15 աշխատանքային օրվա ընթացքում՝

- Մասնակցության հաստատում (Certificate of Attendance),
- Հավաստագիր/միջանկյալ գնահատականներ (Transcript of Records),
- Հաշվետվություն (Mobility Report),
- Հարցազրույց / զրույց ՄՀԶԾ բաժնի աշխատակցի հետ:

7.2 Ինստիտուտը իրականացնում է կրեդիտների ճանաչում՝ հիմնվելով նախապես հաստատված պայմանագրի և կից հավելվածի վրա:

VIII. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

8.1 Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը ամփոփում է շարժունության տարեկան արդյունքները:

8.2 Շարժունության արդյունքները ներկայացվում է Ինստիտուտի գիտական խորհրդին:

8.2 Ընթացակարգը կարող է վերանայվել ուսանողներից ստացված հետադարձ կապի հիման վրա՝ միտված շարունակական բարելավմանը:

IX. ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն ընթացակարգը հաստատվում է գիտական խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Այն կարող է վերանայվել ըստ Ինստիտուտի ռազմավարական առաջնահերթությունների:

ՀԱՎԵԼՎԱԾ N 4
«ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2025 թվականի հունիսի 30-ի N 132-Լ որոշման

ԴԻՄՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ում՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժին

Ումից՝ ____

(Անուն, ազգանուն, գիտական աստիճան)

Պաշտոն ________________________ Ամբիոն/բաժին ________________________

Ստորև ստորագրյալս դիմում եմ մասնակցելու ________________________ միջազգային շարժունության ծրագրին

Նպատակ՝ □ Դասավանդում □ Ուսում □ Վերապատրաստում

Ընդունող հաստատություն ____

Երկիր ________________________ Պլանավորված ժամկետներ ________________

Կցում եմ հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնակենսագրություն (Europass CV)
2. Մոտիվացիոն նամակ
3. Հրավերի նամակ / պայմանագիր (եթե առկա է)
4. Անգլերեն լեզվի իմացության հավաստագիր (B2)

Հեռ.՝ __________________ Էլ. փոստ՝ ________________________

Ամսաթիվ՝ ______________ Ստորագրություն՝ ______________

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ

Սույնով հաստատում ենք, որ

Անուն, ազգանուն՝ _____

Պաշտոն / Ուսումնական ծրագիր՝ _____

Հայաստանի Ֆիզիկական Կուլտուրայի և Սպորտի Պետական Ինստիտուտից

մասնակցել է միջազգային շարժունության_____, ծրագրին, որը տեղի է ունեցել _____ (ընդունող հաստատություն / երկիր):

Ժամկետներ՝ _____ մինչև _____

Ծրագրի տեսակը՝

□ Դասավանդում □ Ուսում □ Վերապատրաստում

Սույն հաստատումը տրամադրվում է մասնակցությունը փաստելու նպատակով:

Հաստատող կողմ.

Անուն, ազգանուն՝ _____

Պաշտոն՝ _____

Կազմակերպություն՝ _____

Ստորագրություն՝ _____

Կնիք

ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՆԱՄԱԿԻ ՕՐԻՆԱԿ

Տվյալ ձևաչափը նախատեսված է որպես ուղեցույց՝ շարժունության ծրագրերին դիմելիս մոտիվացիոն նամակ գրելու համար:

1. Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն
Ուսումնական ծրագիր / Պաշտոն
Հասցե, հեռախոս, էլ. հասցե

2. Ում է ուղղված

Ծրագիրը համակարգող կազմակերպություն / Ընդունող համալսարան

3. Նամակի բովանդակություն

Հարգելի _____,

Սույնով ցանկանում եմ հայտնել իմ հետաքրքրությունը մասնակցելու _____ շարժունության ծրագրին: Այս հնարավորությունը համարում եմ կարևոր իմ մասնագիտական և անձնական աճի համար:

Ես ներկայումս աշխատում եմ «Հայաստանի Ֆիզիկական Կուլտուրայի և Սպորտի Պետական Ինստիտուտում»՝ որպես _____: Իմ մասնագիտական հետաքրքրությունները ներառում են _____:

Ծրագրին մասնակցությունը կնպաստի իմ հմտությունների խորացմանը, ինչպես նաև կբարձրացնի ինստիտուտի միջազգային ճանաչելության մակարդակը:

Կցում եմ իմ ինքնակենսագրությունը և անհրաժեշտ փաստաթղթերը:

Նախապես շնորհակալություն դիտարկման համար:

Հարգանքով՝

_____
(Անուն, ազգանուն)
Ամսաթիվ. _____

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Լրացվում է միջազգային շարժունությանը մասնակցելուց հետո՝ 14 օրվա ընթացքում:

1. Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն՝ _____

Պաշտոն / Ուսումնական ծրագիր՝ _____

Էլ. փոստ՝ _____ Հեռ.՝ _____

2. Շարժունության տվյալներ

Ծրագրի անվանումը՝ _____

Ընդունող հաստատություն / երկիր՝ _____

Ժամկետներ՝ _____ից մինչև _____

Ծրագրի ձևաչափ՝ □ Դասավանդում □ Ուսում □ Վերապատրաստում

3. Շարժունության ծրագրի վերջնարդյունքներ

Նկարագրեք մասնակցության հիմնական նպատակները և ձեռք բերված արդյունքները.

_____

_____

4. Առաջարկություններ

Նշեք առաջացած դժվարությունները և առաջարկությունները՝ ծրագրի բարելավման համար.

_____

_____

5. Կցված փաստաթղթեր

- Մասնակցության հաստատում
- Այլ հավաստագրեր / նյութեր (եթե կան)

Ամսաթիվ՝ _____ Ստորագրություն՝ _____

ՈՒՍԱՆՈՂԻ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ (ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ)

Սույն ձևաթուղթը նախատեսված է ուսանողի միջազգային շարժունությունից հետո ուսումնառության արդյունքների ճանաչման համար:

1. Ուսանողի տվյալներ

Անուն, ազգանուն՝ _____

Ուսումնական ծրագիր / կուրս՝ _____

Ժամկետներ՝ _____ից մինչև _____

2. Ընդունող բուհ / շարժունության ծրագիր

Հաստատություն _____

Երկիր _____

Ծրագրի ձևաչափ. մակարդակ

□ Ուսում

3. Ուսումնառության արդյունքներ

Տրամադրված առարկաների, կրեդիտների և ստացած գնահատականների ցուցակ՝

Առարկայի անվանումը	ECTS կրեդիտներ	Գնահատական	Նշումներ

Կցվում է պաշտոնական ակադեմիական տեղեկագիրը (Transcript of Records) :

4. Ճանաչման հաստատում

Համաձայն ուսումնառության պայմանագրի և ներկայացված արդյունքների՝ նշված կրեդիտները ճանաչվում են:

Հաստատող՝

ստորագրություն. _____ Ամսաթիվ

Կնիք